ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 891Ա

29 օգոստոսի 2025թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՌԱԶՄԻԿ ԱԼԲԵՐՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 75 տան բնակիչ՝ Ռազմիկ Ալբերտի Հակոբյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 06.02.2019թ. հաստատված թիվ 1008 և 1009 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 09.07.2025թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Ռազմիկ Ալբերտի Հակոբյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.0073հա, որի վրա կառուցված է բնակելի տուն.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0409հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 75 հասցեում գտնվող բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շինությունների կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.03հա մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Ռազմիկ Ալբերտի Հակոբյանի /ծնված 10.08.1963թ./ սեփականությունը:
2. Բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0409հա սահմանազատված հողամասից մնացած 0.0109հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ենթակա է օտարման ուղղակի վաճառքի միջոցով ավագանու որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում եմ

Համայնքի ղեկավար

ադրված է _____ ին _____ « » _____ 2025 թ. N _____ որոշմամբ կտ. «___» _____ 2025 թ.

Անուն, ազգանուն (հողամաս տրամադրողը)

Հողամասի իրադրական հատակագիծ

Մասշտաբ 1:1000

Հողամասի հատակագիծ



Համաձայնեցված է

Համաձայնեցված է

Համաձայնեցված է

Համաձայնեցված է

ելու վայրը	Արմավիր Վաղարշապատ համայնք գ. Էջմիածին		
կագիրը	04-002-0057-0021		
ցման նպատակը			
ակային նշանակությունը	բնակավայրերի		
ական նշանակությունը հառատեսքը	Բնակելի կառուցապատման		
ես (հա , քմ)	482 քմ		

Սահմանակից հողօգտագործողներ

Մասշտաբ 1:1000

Որակավորում ունեցող անձ	ԱՐԴԱ ԳԵՎՈՐԳԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Որակավորման վկայականի համարը	0393
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	ԱՁ «ԱՐԴԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ»
ՀՎՀՀ	49839076
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	չափագրության	07.05.2025
	հատակագծի կազմման	07.05.2025

Կ.Տ.